

# Թաղամասեր

ժամանակի սահմանափակում՝ 1 վայրկյան  
Հիշողության սահմանափակում՝ 256 MB

## Շարադրանք

Անգապոլիսը բաղկացած է  $N$  շրջաններից, որոնք իրար միացված են  $M$  միակողմանի ճանապարհներով: Երկու շրջաններ կարող են իրար միացված լինել մեկից ավել ճանապարհներով: Քաղաքապետը որոշել է քաղաքը տրոհել թաղամասերի: Յուրաքանչյուր թաղամասում նա ցանկանում է ընդգրկել մաքսիմալ թվով շրջաններ, այնպես որ տվյալ թաղամասին պատկանող ցանկացած շրջանից հնարավոր լինի գնալ ցանկացած այլ շրջան: Օգնեք քաղաքապետին հաշվելու, թե առնվազն քանի թաղամասի հարկ կլինի տրոհել մեզապոլիսը:

## Մուտքային տվյալներ

Առաջին տողում տրված են շրջանների  $N$  քանակը և ճանապարհների  $M$  քանակը ( $1 \leq N \leq 20000$ ;  $0 \leq M \leq 50000$ ): Հաջորդ  $M$  տողերից յուրաքանչյուրում տրված են 1-ից  $N$  տիրույթին պատկանող երկու ամբողջ թվեր՝ նշանակում է առաջինից երկրորդին տանող ճանապարհի կա:

## Ելքային տվյալներ

Պետք է արտածել մի թիվ՝ թաղամասերի քանակը:

## Օրինակ

Մուտք	Ելք
5 7	2
1 2	
2 3	
3 1	
3 4	
4 5	
5 4	
5 5	